ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (Կոդ՝ Խ-1056-22.04.2025-ՊԻ-011/0) արտահերթ հարց համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի 2025թ. սեպտեմբերի 30-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 2 էջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

03.09.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1056-22.04.2025-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը,

Նկատի առնելով այն, որ օրենքների նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 03.09.2025թ. նիստում տվել է բացասական եզրակացություն,

Հաշվի առնելով, որ օրինագծի հեղինակը «Հայաստան» խմբակցությունն է.

Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Անհրաժեշտ համարել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1056-22.04.2025-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում:
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1056-22.04.2025-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագիծը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա Ազգային ժողովի 2025թ. սեպտեմբերի 30-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:
3. Առաջարկել Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա

քննարկումը սույն որոշման 2-րդ կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1056-22.04.2025-ՊԻ-011/0) ՀՀ օրենքի նախագծով հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

03.09.2025թ.